ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 9 » ...դեկտեմբերի 2016թ. N 23-Լ(Գ)

Լ. ՏԵՐ-ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետի (ծածկագիր՝ 30-2.1-31) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 8-ի եզրակացությունը և Լ. Տեր-Իսահակյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Լևոն Գեղամի Տեր-Իսահակյանին 2016 թվականի դեկտեմբերի 9-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետի (ծածկագիր՝ 30-2.1-31) պաշտոնում՝ լուծելով անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետի (ծածկագիր՝ 30-2.1-31) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2016 թվականի ապրիլի 1-ին կնքված N 2 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

ՀԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ